



ՀՅՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆ

պաշտոնաթերթ



Հայերեն | Eng | Pyc

Գլխավոր | Լուրեր | Թերթ | Հարցազրույց | Մեր մասին | Արխիվ

Հուլիս 31, 2009

Որոնում

Թերթ

30 Հուլիս, 2009

Քաղաքականություն ▪ **Հայե՛ր, նրանք էլ են հայեր...**

Հասարակություն ▪

Մշակույթ ▪

Հայրենիք ▶

Տեսակետ ▪

Հիմնախնդիր ▪

Տնտեսություն ▪

Անդրադարձ ▪

Այսօր հայության մի հատված իրեն հայությունից օտարված ու խորթացած է զգում: Նրանք էլ բոլորիս նման ծագումով հայեր են, նրանց մի մասը նույնիսկ պահպանել է հայոց լեզուն, բայց Օսմանյան կայսրության պարտադրանքով նրանք մահմեդականություն են ընդունել, որի պատճառով էլ մերժվել են հայության կողմից: Խոսքը վերաբերում է համշենահայությանն ու ծպտյալ՝ կլեպտոհայերին: Նույնիսկ մի կարծիք է ձևավորվել, թե բոլոր իսլամացած հայերը համշենահայեր են:

«Մենք կարծես չենք կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ մեր ազգի մի մասն այլադավան է: Հետեւաբար, մենք մերժում ենք նրանց հայ լինելն ընդհանրապես: Այնինչ, պետք է լուրջ փիլիսոփայական վերանայման ենթարկենք ազգ հասկացության հետ կապված մեր պատկերացումները:

Եթե առաքելական եկեղեցուն պատկանող մարդը պետք է համարվի հայ, ապա մեր ազգի մի զգալի մասը 70 տարի աթեիստ է եղել, ուրեմն նրանք հայեր չեն: Եթե լեզուն է ազգային պատկանելության հիմնական չափանիշը, ապա անգլիախոս, ռուսախոս եւ այլ լեզուներով խոսող հայերին մենք ընդհանրապես պետք է անտեսենք: Ես անձամբ հավված եմ այն մտքին, որ ազգային պատկանելության հիմքում պետք է դրվի ազգային գիտակցությունը»,- ասաց ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ Կարեն Խանլարյանը, ով ատենախոսություն է պատրաստում համշենահայերի խնդրի վերաբերյալ:

Շատ հաճախ շփոթության են մատնում հենց Համշեն եւ համշենահայ բառերը: Որոշ մարդիկ կարծում են, որ Համշենը թուրքական բառ է: Այնինչ այն հայկական ծագում ունի եւ կապված է Համամ Ամատունու անվան հետ:

«8-րդ դարում մի մեծ իրադարձություն կատարվեց: Չղիմանալով արաբների ճնշմանը՝ բավական մեծ թվով հայեր, ըստ պատմական տվյալների՝ մոտ 12 հազար տղամարդ՝ իրենց ընտանիքներով, Համամ Ամատունու եւ նրա հոր գլխավորությամբ, շարժվում են դեպի Պոնտոս, որն այդ ժամանակ մտնում էր Հունաստանի կազմի մեջ: Նրանք ճակատամարտ են տալիս իրենց հետեւող արաբների հետ եւ հաղթում: Արդյունքում՝ Կոստանդին կայսրը ներկայիս Համշենի տարածքները հատկացրեց այս ներգաղթած հայերին:

Հետագայում Համամ Ամատունին իր անունով կառուցում է քաղաք Համամշեն անունով, որը ավելի ուշ ժողովրդի մեջ տարածվեց կրճատ՝ Համշեն անունով»,- հայտնեց «Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն, ԵՊՀ հայագիտության կենտրոնի ավագ գիտաշխատող Հայկազուն Ավրջյանը:

Հայության այս հատվածը ավանդաբար համարվել է հայությունից դուրս՝ առանձին էթնիկ խումբ: Նույնիսկ կան մարդիկ, ովքեր կարծում

են, թե համշենահայերը առաջացել են հայ, թուրք եւ քուրդ ազգերի ձուլումից:

«Մինչեւ Ցեղասպանությունը, Համշենի տարածքում արդեն բավական մեծ թիվ էին կազմում իսլամացած հայերը, որոնք, սակայն, այն ժամանակվա պատրիարքարանի ոչ մի վիճակագրական ցուցակում ընդգրկված չէին: Այսինքն՝ նրանք միմիայն կրոնական տեսանկյունից արդեն իսկ համարվում էին հայությունից դուրս:

Բայց հատուկ պետք է նշել, որ համշենահայությունը բնավ էլ էթնիկ կատեգորիա չէ, այլ զուտ աշխարհագրական հասկացություն է: Համշենահայ բառին պետք է վերաբերվել ճիշտ այնպես, ինչպես պոլսահայ, ռուսահայ եւ այլն բառերին: Եվ առհասարակ, շատ սխալ է այն կարծիքը, թե հայը իսլամանալու դեպքում դառնում է համշենահայ: Համշենահայ՝ նշանակում է ծագումով համշենցի հայ», - նշեց Կարեն Խանկարյանը:

Այս ամենը համշենահայերին չի հիասթափեցնում եւ չի ընկճում:

Նրանցից շատերն այսօր վստահ եւ համարձակ բարձրաձայնում են, որ իրենք հայ են: Նրանց նույնիսկ ավելի հայրենասեր հայեր կարելի է համարել, քանի որ այն բռնություններին, որ գործադրել են համշենահայության հանդեպ՝ նրանց իսլամացնելու նպատակով, շատերը չէին դիմանա: Օրինակ՝ միայն հայերեն խոսելու համար Օսմանյան կայսրությունում կտրում էին նրանց լեզուները եւ այլն:

Զուլման այդ բռնի մեթոդները հիմնականում սկսվեցին 17-րդ դարի առաջին կեսին, եւ շարունակվեցին հետագա դարերում եւ, ըստ էության, շարունակվում են նաեւ այսօր, քանի որ համշենահայերի մեծ մասն այսօր էլ վախենում է խոսել իր ազգային պատկանելության եւ արմատների մասին: Իսկ մենք, թեկուզ եւ անգիտակցաբար, նրանց ավելի ենք հեռացնում մեզանից:

«Մենք վառում ենք մեզանից հայության այս հատվածին, այնինչ պետք է շատ նուրբ գործենք: Մենք պետք է գտնենք մեզ միավորող կետերը, այլ ոչ թե բաժանող: Իսկ միավորող կետը մեր ընդհանուր պատմական ճակատագիրն ու մեր ընդհանուր ազգային խնդիրն է:

Արեւմտյան Հայաստանի եւ, առհասարակ, Թուրքիայի ամբողջ տարածքում այսօր, նվազագույն հաշվարկներով, 3-3.5 մլն համշենահայ եւ ծպտյալ կամ կլեպտոհայեր են ապրում: Որոշ հետազոտողներ նույնիսկ նշում են 10-12 մլն թիվը, բայց մեզ համար թիվը կարեւոր չէ: Եթե նույնիսկ այնտեղ ապրելին թեկուզ 10 հազար հայեր, մեզ համար նույնքան կարեւոր կլինեին», - ասաց Հայկազուն Ավրոյանը:

Իսկ եթե ազգային ինքնագիտակցությունը հաշվի առնենք, ապա համշենահայերը բավականին լավ գիտեն եւ իրենց արմատները, եւ իրենց պապերի պատմությունը ու նույնիսկ պարերի, տոների ու ավանդույթների միջոցով պահել են իրենց հայությունը՝ չնայած շատ համշենահայեր այսօր չեն խոսում հայերեն եւ առաքելադավան չեն:

«Մենք հավատում ենք, թե կրոնները միմիայն բաժանում են մեր ժողովրդին. մեր ազգը, մեր ժողովուրդը, մեր հայրենիքը բոլոր կրոններից ավելի բարձր են:

Մենք փորձում ենք նաեւ Սփյուռքի ուշադրությունը հրավիրել մեզ վրա, սակայն, Սոչիի կոնֆերանսից բացի, այլ գործնական քայլ արված չէ համշենցիների եւ իսլամացված հայերի խնդիրների ուղղությամբ: Մեզ հետ կապվող սփյուռքահայերի մեծամասնությունը, դժբախտաբար, ընդհանրապես գաղափար չունի, թե որտեղ է գտնվում եւ ինչ է նշանակում Համշենը: Մենք սփյուռքահայերին Համշենի մասին

31/07/2009

Armenia and Armenian News - Y...

պատմելուն եւ համշենահայերի խնդիրները բացատրելուն ավելի շատ ժամանակ ենք տրամադրում, քան պետք է հատկացնենք համշենահայերին իրենց հայկական արմատների մասին բացատրելուն»,- նամակով հայտնում է համշենահայ Վաշիթոյուն եւ ընդ որում՝ հայերեն...

Գեորգ ԱՎՉՅԱՆ



2009 Հուլիս

02 | 04 | 07 | 09 | 11 | 14 | 16 | 18 | 23 | 25 | 28 | 30

© 2009 ԵՐԿԻՐ . Բոլոր իրավունքները պաշտպանված են: Էլ. փոստ՝ erkir@arminco.com

Ձևավորում՝ Սամվել Փարթամյան

